ՖԵԼԻՔՍ ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍՈՎԻ «ՀԱՅԱՍՏԱՆԸ Մ. Թ. Ա. 522–520թթ. ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ» ՀՈԴՎԱԾԻ ՄԱՍԻՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ

Ֆելիքս Տեր-Մարտիրոսովի տպագրության ներկայացված աշխատանքը, անկախ նկատված թերություններից, անհրաժեշտ է տպագրել:

1. Հոդվածում կան բավական հետաքրքիր և ուշադրության արժանի կետեր, մանավանդ Դադարշիշի մասին հայտնած նրա կարծիքը, ըստ որի նա եղել է Իրանի կողմից Հայաստանում նշանակված իշխանավորներից մեկը՝ նախքան հայտնի խռովությունները: Սա շատ կարևոր դիտարկում է, որը, գժբախտարար, չի զարգացվել: Հավանաբար, թե՛ Դադարշիշը, թե՛ Վահումիսան եղել են Իրանի կողմից նշանակված սատրապներ Հայաստանի տարբեր մասերում: Հենց այդ է պատճառը, որ Հայաստան են ուղարկվում միաժամանակ երկու զորահրամանատար՝ յուրաքանչյուրը իր տիրույթում ապստամբություններ ճնշելու համար: Նման երևույթ հանդիպում է նաև հետագայում, երբ Հայաստանի երկու սատրապները հենց իրենք են ապստամբում և անկախություն հռչակում՝ յուրաքանչյուրն իր տիրույթում՝ Հայաստանում Արտաշես I-ը (189–161), Ծոփքում՝ Զարեհը:

2. Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ հայերը ոչ թե հինգ ճակատամարտ են տալիս իրար ետևից, այլ այդ ճակատամարտերը տալիս են երկու զորաբանակները՝ առանձին-առանձին: Ճակատամարտերի ժամանակն ու տեղերը հետևյալներն են.

ա) 522թ. դեկտեմբերի 31, Իզալա մարզում (Վահումիսա).
բ) 521թ. մայիսի 21, Զուզախիայում (Դադարշիշ).
գ) 521թ. մայիսի 30, Տիգրա ամրոցի մոտ (Դադարշիշ).
դ) 521թ. հունիսի 12, Աուտիյարա մարզում (Վահումիսա).
ե) 521թ. հունիսի 21, Ույամա ամրոցի մոտ (Դադարշիշ):

Այսպիսով, Վահումիսան սկսում է մարտը 522թ. դեկտեմբերի 31-ին, բայց երկար ժամանակ մնում է տեղում՝ կամ ձմեռվա պատճառով, կամ համալրում ստանալու համար: Վահումիսան իր երկրորդ ճակատամարտը տալիս է ավելի քան հինգ ամիս անց, երբ Հայաստանում արդեն տաք էր, 521թ. հունիսի 12-ին: Սքանով էլ Վահումիսայի անելիքը վերջանում է:

Ինչ վերաբերում է Դադարշիշին, ապա նա իր երեք ճակատամարտերը տալիս է շատ կարճ ժամանակում՝ 521թ. մայիսի 21-ից մինչև հունիսի 21-ը, այսինքն՝ ուղիղ մեկ ամսում:

Նկատենք, որ Վահումիսայի առաջին ճակատամարտի վայրը՝ Իզալան, գտնվում է Արևմտյան Տիգրիսի մոտակայքում, դեպի հարավ: Այն հիշատակվում է նաև սեպագիր այլ աղբյուրներում՝ ասուրերենում (Իզալա, Իծալա և այլն), ուրարտերենում (Իշալա), նաև խեթերենում: Սակայն, Իզալա-Իշալա մարզը, եթե սեպագիր աղբյուրներում վկայվում է

Արևմտյան Տիգրիսի արևմտյան կողմերում, ավելի մոտ Եփրատին, ապա բյուզանդական աղբյուրներում այն (որպես ամրոց) գտնվում է Տիգրիսների միախառնման վայրի մոտերքում, որպես Իձալաս: Անհրաժեշտ է հիմնավին ստուգել, թե Վահումիսան ո՞ր ուղղությամբ է ներխուժել Հայաստան՝ Տիգրիսո՞վ, թե ավելի արևմուտքով: Դժբախտաբար, Աուտիյարա մարդը տեղորոշել հնարավոր չէ, ուստի կարող ենք ենթադրել, որ Վահումիսան Հայաստան է ներխուժել հարավ-արևմուտքից:

Իսկ ինչ վերաբերում է Դադարշիշի երեք ճակատամարտերին, ապա նրանք եղել են Զուղախիայում, Տիգրայում և Ույամայում: Ենթադրվում է, որ այս երեքից երկրորդը՝ Տիգրան, պետք է որ լինի Տիգրիսի մոտակայքում, իսկ մյուսների տեղադրությունը վիճելի է: Սակայն, մեր կարծիքով, վիճելի է նաև հենց Տիգրայի տեղադրությունը: Եթե Վահումիսան եկել է Տիգրիսով և երևի մտնելու էր Բաղեշի լեռնանցքը, ապա Դադարշիշը չէր կարող Տիգրիսի մոտերքում լինել: Եթե նկատի ունենանք հնչյունական օրինաչափությունները, ապա Տիզրա անվանումը ավելի շատ կհամընկնի Տայգրյան գավառի անվան հետ, որը միանգամայն ամեն ինչ կդնի իր տեղը: Այսինքն, Դադարշիշը դալիս է արևելքից և նպատակ ունի մտնել Տուշպայի շրջակայքը: Սա արդեն միանգամայն բնական է:

3. Պակաս հետաքրքիր չէ նաև Խալգիտայի որդի Արախայի հարցը: Այստեղ կա մի շատ կարևոր հանգամանք, որը վրիպել է բոլոր ուսումնասիրողների աչքից: Յուրաքանչյուր թշնամու մասին ասվում է մոտավորապես հետևյալը. այսինչը ապստամբեց այսինչ քաղաքում և իրեն հռչակեց թագավոր: Շատ օրինական է թվում: Սակայն, երբ խոսքը հասնում է Արախային, նման բան չի ասվում: Պարզվում է, որ նրա մասին ասվում է այսպես. Արախան գրավեց Բաբելոնը և իրեն հայտարարեց թագավոր: Ուստի, Արախան նախապես Բաբելոնում չի եղել: Իսկ որտե՞ղ է եղել: Որպեսզի հարցը հարթեն, առաջ է քաշվում այսպիսի մի վարկած, թե Բաբելոնում կար մեծաքանակ հայկական բնակչություն, որն ապստամբեց և Արախան իրեն թագավոր հռչակեց: Սակայն նման դեպքում Բաբելոնը դրավելու փաստը բոլորովին անտեսվում է և առհասարակ չի էլ նկատվում: Այնուամենայնիվ, Վահումիսայի դանգաղումը արդյո՞ք կապ չունի Արախայի՝ Բաբելոնը գրավելու փաստի հետ: Արդյո՞ք Արախան չի ընդհարվել Վահումիսայի հետ, ցրել նրա զորքը, առաջ շարժվել դեպի Բաբելոն և գրավել այն: Չնայած դժվար թե, բայց տվյալ ժամանակաշրջանում, երբ Իրանը մասնատվել էր, նման արշավանք, թերևս, հնարավոր էր: Սակայն հարցը պահանջում է լուրջ ուսումնասիրություն, խիստ բազմակողմանի քննություն:

4. Հայկական զորքը Հայաստանում լինելու հարցը և Դադարշիշի ու Վահումիսայի առանց զորքի Հայաստան գալու վարկածը քննության չի դիմանում, քանի որ ճակատամարտերը տեղի են ունենում հենց Հայաստանի սահմանների վրա: Ուրեմն, Դադարշիշն ու Վահումիսան դալիս են զորքով, ընդ որում, ոչ թե հայկական, այլ պարսկական, և կռվում են հայկական ապստամբների կամ զորքի դեմ: Ասվում է նաև, որ Հայաստանում ապստամբածները ոչ թե հայերն են եղել, այլ պարսկական կայազորները, որը միանգամայն անհավատալի է, թեև դա իր որոշակի հիմքն ունի: Թա-

գավորը ուղարկելով իր զորարանակները, Դադարշիշին ու Վահումիսային ասում է. «Գնա՛, նվաճիր այն զորքը, որը չի ուզում իրեն իմը համարել»: Իհարկե, այստեղ «զորք» բառը կարող է նման եզրակացության հանգեցնել ուսումնասիրողին, սակայն, կա մի բան, որ ամեն ինչ կարող է իր տեղը գնել. անհրաժեշտ է գիտենալ, որ հին պարսկերենում kara բառը, որ այստեղ թարգմանված է «զորք», ունի նաև «ժողովուրդ» իմաստը: Ուստի, ոչ թե «Գնա՛, նվաճիր այն զորքը...», այլ «Գնա՛, նվաճիր այն ժողովուրդը...»:

5. Խիստ կարևոր է նաև Գաումատա մոգի հարցը: Պետք է ասել, որ այս մասին արդեն նոր նյութեր կան, որոնք գուցե վերաբերում են հենց Գաումատային, նույնիսկ պարսկական սեպագրերի ստեղծման հարցերին: Իրանում հայտնաբերված մի դամբարանում գտնված մումիան և սեպագիր արձանագրությունները ցույց են տալիս, որ հանդուցյալը Գաումատան է: Այնտեղ հանդիպում է «մագուշ» բառը, նաև հետևյալ արձանագրությունը. բա գա. սա զա, դու բա. հա բու բա. այսինքն՝ «Աստված Սազադուրան դաժան(?) (է)»: Ընդ որում Սազադուրա աստվածը իրանական դիցարանի ընդդետնյա (սնդադամետի) աստվածությունն է, որը ոչ մի տեղ չի հիշատակվում, բացի այս դամբարանի արձանագրությունից: Այս դամբարանի դրությունները, նյութերը, սարկոֆագն ու մումիան շատ բանով կօգնեն նաև հայագիտության բազմաթիվ հարցեր նորովի լուսաբանելու համար: